

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԳԱՂԹԸ

## ԿԲ ՄԿՄ

ԶԵԿՈՅՑ Հ. Բ. Լ. ՄԻՈՒԹԵԱՆ

Բ.

Հետ շփում պահելով մեծաղէն նպաստեց դաղթականներու տեղաւորման, տուներու շինութեանու պահպանման գործերուն։ Փոխադրութիւններ կատարեց, տուններ շինեց, առողջապահական միջոցներ ապահովեց, անօթիններ կերակրեց, դարձնատուններ հաստատեց, սերմնցու կազմակերպեց, արտասահմանի, մանաւանդ Ամերիկայի ազգականներու հետ դրամական օգնութեան խողովակ ծառայեց, եւ, բազմապիսի կերպերով, պահապանութիւնը ըրաւ այս ժողովուրդի կեանքին։ Մեր հաշուեցուցակները պարզ վկայ են թէ ինչպէս Հ. Բ. Լ. Միութիւնը անխտրական ոգիով բոլորին հաւասար կերպով օգնած է եւ բոլորը իրեն կապած անկեղծ համարումով։»

Սուրիոյ եւ Լիրանանի Մալթիայի Քոնթրոլի գործը, որ աւագ կարեւորութիւն ունի այդ ճահճախութ երկրին մէջ ուր ճալարիան աւերներ կը զործէր մանաւանդ հայ կայաններու մէջ, Հ. Բ. Լ. Միութեան լաւագոյն ձեռնարկներէն մին եղած է, որուն չառորդ գարակէօղեան Հիմնարկութիւնը սիրայօժար տրամադրած է իր նիւթական օժանդակութիւնը։ Մասնայատուկ Յանձնախումբը, որուն գլուխը կը գտնուին Տոքթ. Յ. Եէնիզոմչեան և Տոքթ. Տ. Պէրպէրեան, իր վերջին տեղեկագրովը կը մանրամասնէ այն շատ զնահատելի ծառայութիւնը զոր այս ձեռնորդ կը ընծայած է մալարիայի դէմ մղուած առողջապահական պայքարին շնորհիւ։ 1945-ին այդ նրապատակին համար ծախսուած է՝ 14808 տոլար եւ ներկայ տարուան համար կը նախատեսուի 16900 տոլար, որուն 5149 տոլարը միայն պատրաստ է։

12.- Հ. Բ. Լ. Միութեան կող-

մէ ընձեռուած այլազան օգնութեանց կարգին, պատերազմին ակիզրը Բարիզի կեղը. Վարչութեան կողմէ դրամական նուէրներ դրկուեցան Հայ զինուորներու, յետոյ Բարիզին եւ թէ Մարսէլէն Հայ զերիներուն բազմաթիւ ծրաբներ դրկուեցան, իսկ զինուորի եւ կարօտ ընտանիքներու, ինչպէս եւ ժտաւորականներու պարբերաբար նպաստներ յատկացուեցան։

Վերջին ամիսներու ընթացքին եւ, Միութեան Նիւ Եորքի Տիկնանց կեղը. Յանձնախումբին միջոցաւ ֆրանսա, Յունաստան և այլն, ուտեստեղինի 146 ծրաբներ դրկուեցան, գլխաւորաբար յօգուտ ժտաւորականներու, եւ այդ սպասարկութիւնը դեռ կը շարունակուի։ Բաց աստի, կեղը. Վարչութեան կողմէ 1000 տոլար տրամադրուեցաւ Ֆրանսարնակ ժտաւորականներու ի նպաստ։

13.- Իրբեւ լրացուցիչ տեղեկութիւն, կ'աւելցնենք թէ Մելգոննեան կրթ. Հաստատութեան 348 շրջանաւարտներէն ոմանք Եւրոպայի մէջ համալսարանական բարձր ուսումներու եւ մասնագիտութեանց հետեւելով, որպէս Նույլարեան սաներ, տարիներ առաջ Հայաստան մեկնեցան եւ վայլուն դիրքեր գրաւեցին, ուրիշներ եւս կը պատրաստուին ծառայել Հ. Բ. Լ. Միութեան, Դիսաւորաբար Մելգոննեան Հաստատութեան մէջ պաշտօններ ըստանձնելով։ Առ հասարակ Վարժապետանոցէն շրջանաւարտ եք դող սաները Սուրիոյ եւ Լիրանանի ազգային վարժարաններուն մէջ ուսուցչական պաշտօններ կը վարեն եւ ուրիշներ գործի աշխարհին մէջ յաջողութիւններ կը ունենան։

Վարիչ-Պատուիրակ  
Վ. ՄԱԼԵԶԵԱՆ